ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Իտալիայի Հանրապետություն (Թուրին) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Մարիետա Սարգսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության արտաքին կապերի վարչության գլխավոր մասնագետ.

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Իտալիայի Հանրապետություն (Թուրին), 2024 թվականի մայիսի 26-ից հունիսի 1-ը

4. **Հրավիրող կողմը.**
   Աշխատանքի միջազգային կազմակերպություն

5. **Գործուղման նպատակը.**

   Մասնակցություն «Աշխատանքի միջազգային ստանդարտների ակադեմիա» խորագրով դասընթացին, որի նպատակն էր աշխատանքի միջազգային չափորոշիչների առնչությամբ ընթացակարգերին և ԱՄԿ անդամ պետություններին այդ չափորոշիչների նկատմամբ կանոնադրական պարտավորություններին մանրամասն ծանոթացնելը: Դասընթացը նաև ուսուցողական էր կոնվենցիոն պարտավորություններն իրականացնելիս համապատասխան գիտելիք ունենալու տեսանկյունից, սոցիալական գործընկերության դերի կարևորության ընկալման առումով ևս: Դասընթացին կային երկրներ, որոնք ներկայացված էին եռակողմ (կառավարության ներկայացուցիչ, արհմիությունների կոնֆեդերացիայից և գործատուների հանրապետական միությունից ներկայացուցիչ)

6. **Քննարկված թեմաները.**

   Դասընթացի օրակարգում ներառված էին հետևյալ թեմաները՝
   - NORMLEX և աշխատանքի միջազգային չափորոշիչների աղբյուրներ,
   - Ճգնաժամերի ժամանակաշրջանում աշխատանքի միջազգային չափորոշիչների կիրարկում,
   - Չափորոշիչների վերանայման մեխանիզմներ,
   - Անվտանգ և առողջ աշխատանքային միջավայր,

- Աշխատանքի միջազգային չափորոշիչների պրոցեդուրաների հետ կապված հարցեր,
- Միավորվելու ազատության և կոլեկտիվ բանակցությունների աշխատանքի միջազգային չափորոշիչներ,
- Որակյալ աշկերտության աշխատանքի միջազգային չափորոշիչները
- Հարթակային տնտեսությունում (Platform economy) արժանապատիվ աշխատանքի գիտակցում,
- Աշխատանքի միջազգային չափորոշիչները եռակողմ խորհրդակցություններում,
- ԱՄԿ կոնվենցիաների կիրարկման զեկույցների շուրջ փորձի փոխանակում,
- Ախատանքի միջավայրում կենսաբանական վտանգները,
- Աշխատանքի միջազգային չափորոշիչները հավասարության և հակախտրականության կոնտեքստում,
- Աշխատանքի փոփոխվող աշխարհում աշխատանքի վարչարարությունը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Դասընթացի ղեկավարը Թուրինի ուսումնական կենտրոնի աշխատանքի միջազգային ստանդարտների, աշխատանքային իրավունքների և գենդերային հավասարության ծրագրի գծով համակարգող, վերապատրաստող Մաուրա Միրալոն էր: Դասընթացին մասնակցում էին 23 երկրներից: Դասընթացի լեզուն անգլերենն էր:

Մասնակիցների շարքում ընդգրկված էին այն մարդիկ, որոնք իրենց աշխատանքի բնույթով անմիջականորեն առնչվում էին ԱՄԿ կոնվենցիաների կիրարկման վերաբերյալ զեկույցների մշակման և ԱՄԿ կենտրոնակայան ներկայացման հետ:

Դասընթացի ընթացքում ներկայացվել է ԱՄԿ մանդատը: Աշխատանքի միջազգային չափորոշիչների կիրարկման մեխանիզմները, կոնվենցիաների վավերացման գործընթացները, ըստ երկրների քեյսերի նաև քննարկումներ են ընթացել: Ներկայացրել եմ ՀՀ մասով վավերացված կոնվենցիաները, ազգային զեկույցների ներկայացման գործընթացները, ՀՀ կողմից 8 հիմնարար կոնվենցիաների վավերացումը; Ներկայումս հիմնարարարներն արդեն 10 են, «Աշխատանքի անվտանգության և առողջության մասին» ԱՄԿ թիվ 155 և «Աշխատանքի անվտանգության և առողջության խթանման շրջանակի մասին» ԱՄԿ թիվ 187 կոնվենցրիաները ևս հիմնարար են, ըստ էության այս երկու կոնվենցիաները փոխլարցնում են միմյանց, սակայն 155 կոնվենցիան առավել շատ պարտվորություններ և իրավունքներ է ենթադրում: Դասընթացի շրջանակում խոսել ենք պլատֆորմային տնտեսության, որը նոր՝ մոտեցումներ է

ենթադրում, աշխատավայրում կենսաբանական վտանգների, աշխատանքի առողջ և անվտանգ պայմանների, ոչ ֆորմալ տնտեսության, սոցիալական գործընկերության, մի կողմից աշխատանքի ընդունման խտրական վերաբերմունքի՝ մյուս կողմից աշխատավայրում գենդերային հավասարության պահպանման, եռակողմ բանակցությունների վարման և այլնի մասին:

Դասընթացը հետաքրքրական էր նրանով, որ տեղում կատարում էինք խմբային աշխատանքներ, ունենում էինք ելույթներ և տարատեսակ ինտերվենցիաներ:

Եղել եմ երկու խմբային աշխատանքի ղեկավար և համապատասխանաբար ներկայացրել եմ մեր աշխատանքները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի արդյունքում որոշումներ չեն ընդունվել, պայմանավորվածություններ ձեռք չեն բերվել, փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկել եմ նմանատիպ դասընթացներին դիտարկել ՀՀ-ից եռակողմ մասնակցության հնարավության հարցը

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

11.06.2024